№ 15 ԵՐԵՔՇԱԲԹԻ ՓԵՏՐՎԱՐԻ 8 **1894** ԵՐԵՔՇԱԲԹԻ ՓԵՏՐՎԱՐԻ 8 № 15

ՔՍԱՆԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարվանը 6 ռուբ.
Առանձին համարները 7 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ. Редакція «Мшакъ».
կամ Tiflis. Rédaction «Mschak».

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ.

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՆԵՐԿԱՅ **1894** ԹԻԱԿԱՆԻՆ

„ՄՇԱԿ"

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳՐԻ
ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է։

«ՄՇԱԿԻ» տարեկան գինը՝ 10 ր., տասն և մէկ և տասն ամսվանը՝ 9 ր., ինն և ութ ամսվանը՝ 8 ր., եօթ ամսվանը՝ 7 ր., վեց ամսվանը՝ 6 ր., հինգ ամսվանը՝ 5 ր., չորս ամսվանը՝ 4 ր., երեք ամսվանը՝ 3 ր., երկու ամսվանը՝ 2 ր., ամսական 1 ռուբլի։

Գրվել «ՄՇԱԿԻՆ» կարելի է ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ։

Օտարաքաղաքացիք պէտք է դիմեն հետևեալ հասցէով՝ Тифлисъ. Редакція «Мшакъ», իսկ արտասահմանից՝ Tiflis. Rédaction «MSCHAK»։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Պետերբուրգի համալսարանի եօթանասնամեակը.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ· Դպրոցական առողջապահութիւն. Թիֆլիսի հայ-կաթոլիկների եկեղեցական հարցը· Նամակ Նուխուց· Նամակ Լէզուրից· Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ· Հացի պակասութիւնը Թիւրքայ Հայաստանում. Սերբիայի ճգնաժամի պատճառը. Արտաքին լուրեր.—ԽԱՒՈՆ ԼՈՒՐԵՐ.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.— ԲՈՒՐԱ·—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ· Նամակ Աւստրիայից·

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԵՕԹԱՆԱՍՆԱՄԵԱԿԸ

—

Այսօր Պետերբուրգի համալսարանը տօնում է իր եօթանասուն և հինգամեայ յոբելեանը։ Անցել է եօթանասուն և հինգ տարի այն օրից, երբ Պետերբուրգի Գլխաւոր Մանկավարժական ճեմարանը փակվեց և նրա տեղը բացվեց ներկայ համալսարանը։

Զանազան տեղեր ցրված նրա սաները այսօր ուղղում են իրանց համակրութեան և երախտագիտութեան զգացմունքները դէպի այն սիրելի հիմնարկութիւնը, որ նրանց տուել է մտաւոր և բարոյական կրթութիւն, որ նրանց հոգեկան զարգացման և աճման համար ծառայել է իբրև գթառատ սնտու մայր, alma mater.

Սա մի ազնուագոյն տօնախմբութիւն է, նուիրված այնպիսի հաստատութեան, որ տասնեակ տարիների ընթացքում տուել է մարդկանց բարձր հոգեկան զարգացում, սէր դէպի գաղափարականը, դէպի յաւիտենականը, դէպի փիլիսոփայական բարձր գիտակցութիւնը, որ քարոզել է մարդկանց ապրել իդէայի համար, ապրել գիտութիւնը և գաղափարականը կեանքի մէջ գործադրելու համար։

Մեր դարի առաջադիմութիւնը ոչ այլ ինչ է, եթէ ոչ գիտութեան զարգացման արդասիք։ Մենք հասկանում ենք գիտութիւնը լայն մտքով, որի մէջ տեղի ունեն մարդկային ոգու բոլոր կարողութիւնների արտայայտութիւնները։

Գիտութիւնը բացեց մեր առջև տիեզերքի գաղտնիքները և դառաւ բնութեան ընդհանուր օրէնքները։ Գիտութիւնը յայտնագործեց մարդկային հասարակութեան զարգացման պայմանները, անտեսական և իրաւական հիմունքները. գիտութիւնը առաջ բերեց արդիւնագործութեան այն փայլուն բարգաւաճումն և մեքենայագործութեան այն հրաշալիքները, որոնց մասին երազել անգամ չէին կարող հին աշխարհի ամենահամարձակ փիլիսոփաները և գաղափարական ցնորքներ շարադրողները։ Գիտութիւնը և նրա անվերջ զարգացման հրապոյրը, մղելով մարդկանց դէպի ոգևորված գործունէութիւն, տալիս են մարդկութեան փայլուն յոյսեր երջանիկ ապագայի համար։

Թանդ է այդ պատճառով այսպիսի հաստատութեան երկարատև գործունէութեան յոբելեանը, որի նպատակն է՝ մատակարարել հասարակութեանը գիտութիւններ, գիտնական մտածողութիւն, գիտութիւն տարածողներ։

Պետերբուրգի համալսարանը աղդել է և կովկասի կեանքի վրա, թէ այն կովկասցիների շնորհով, որոնք ուսել են նրա հիւրընկալ լսարաններում և թէ այն կրթված ոչ-կովկասցիների շնորհով, որոնք զանազան գործով և պաշտօնով ապրել, գործել են մեր երկրում և նպաստել են նրա բարոյական և մտաւոր զարգացմանը։

Սրանց ողջունելով Պետերբուրգի համալսարանի եօթանասուն և հինգամեայ գոյութեան և գործունէութեան յոբելեանը, ցանկանում ենք, որ նա այսուհետև աւելի ևս բարգաւաճի և զօրանայ, տալով ազնիւ քաղաքացիներ, օժտված բարձր բարոյական իդէալներով, զինված գիտութեան անպարտելի ոյժով, պատրաստ գիտութեան և գաղափարի զինուոր լինելու կեանքի մէջ, առանց խարդախելու ճշմարտութիւնը, առանց դաւաճանելու համալսարանում տուած երդումներին, հաւատարիմ հին յունական դիւցազնուհի մոր անմոռանալի պատուէրին՝ „վահանով կամ վահանի վրա„։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԴՊՐՈՑԱԿԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹԻՒՆ

III

Դասարան։ Դասարանի մեծութիւնը, օդափոխութիւնը, լուսաւորութիւնը, տաքացնելու ձևը մանրամասն ուսումնասիրվում է դպրոցական առողջապահութեան մէջ։

Դասարանի մեծութիւնը անտարակոյս պէտք է համապատասխանի աշակերտների քանակութեանը։ Հասկանալի է, որ որքան մեծ է աշակերտների թիւը, այնքան էլ ընդարձակ պէտք է լինի դասատունը։ Այս պահանջը միանգամայն ստիպողական է, և ամեն երկրի օրէնքները որոշ թուանշաններ են տալիս մեզ դասարանի երկարութեան, լայնութեան, բարձրութեան մասին։

Եւրոպական դպրոցական կանոնադրութիւնները ընդհանրապէս թոյլ են տալիս մի դասատան մէջ զետեղել ոչ աւելի քան 40 հոգի գիւղական ուսումնարանների համար, որոնք կարող են միայն մի սենեակից բաղկացած լինել. նրանց թիւը կարող է և աւելի մեծ լինել։ Զափազանց շատ երեխաներ մի սենեակի մէջ ժողովելու անյարմարութիւնները բազմաթիւ են, և ի միջի այլոց այն, որ բոլորը չեն կարող լաւ տեսնել գրատախտակը, լաւ լսել ուսուցչի ձայնը, իսկ այս վերջինը՝ լաւ հսկել աշակերտների վրա և այլն։

Հիգիէնիստները բազմակողմանի ուսումնասիրելով այս խնդիրը՝ մեզ տալիս են մօտաւորապէս հետևեալ թուերը դասարանի ընդարձակութեան մասին.—երկարութիւն 10 մետր (մօտ 5 սաժէն) և լայնութիւն 7—8 մետր ($3^1/_4$—4 սաժէն)։ Լաւ է զեկավարվել այս թուերով, իբրև maximum-ով, քանի որ սրանից աւելի ընդարձակ դասատունը կարող է շատ անյարմարութիւններ առաջացնել թէ առողջապահական և թէ սոսկ մանկավարժական տեսակէտներից։ Մնում է դասարանի բարձրութիւնը, որը Դոբրոսալովինի ասելով, ընդունված է ոչ պակաս, քան $4^1/_2$ մետր. (մօտ 2 սաժէն), բայց ընդհանրապէս ցանկալի է, որ նա աւելի մեծ լինի։ Այսպիսով մի դասարան—տիպի խորանարդը (кубическая вмѣстимость) հաւասար պէտք է լինի $10 \times 7 \times 4^1/_2 = 315$ մետրի, այսինքն. $32^1/_2$ սաժէն խորանարդի. եթէ այսպիսի մի սենեակում նստած են օրինակ 50 աշակերտ, նրանցից իւրաքանչիւրը կունենայ 315:50 մետր (կամ $32^1/_2$:50 սաժէն) խորանարդ օդ։ Այս հաշուով իւրաքանչիւր աշակերտ կունենայ մօտ 6 մետր, կամ 2 արշին խորանարդ օդ իր համար։

Այսպիսով ուրեմն, դասարանի ընդարձակութիւնը որոշեալ սահմանն ունի, որը չէ կարելի անցնել։ Բայց հասկանալի է, որ դրանից փոքր դասարաններ կարող են և պէտք է գոյութիւն ունենան։ Բոլոր խնդիրը նրանումն է, որ իւրաքանչիւր աշակերտին որոշեալ քանակութիւնով օդ ընկնի շնչելու։

Դասարանի օդը։ Երբ մեծ քանակութիւնով երեխաներ մի ժամ չարունակ շնչում են համեմատաբար փոքր և փակ դասարանի մէջ, նրա օդը փչանում է, վնասակար է դառնում մանուկների համար։ Զանազան երկրներում և տարբեր պայմաններում արած հետազօտութիւնները սահմանեցին օդի քանակութիւնը մի աշակերտի համար։ Այս քանակութիւնը միջին թուով հաւասար է 5 մետր խոր. որից պակաս միանգամայն արգելված պէտք է համարվի։ Չը պէտք է հետևել այն հրեշաւոր օրինակներին, որոնք տալիս են մեզ գերմանական և ռուս մի քանի դպրոցները, որտեղ աշակերտին ընկնում է 1 մետրից էլ պակաս, ինչպէս այդ երևում է Պե-

---

հովիւ էր, սեռած մի չվդացի ընտանիքէ, որ շատ տարիներ առաջ եկած հաստատված էր այդ կղզի Բէրգէն քաղաքի մէջ։

Բիլրօթ պարտական է իր նախնական կրթութիւնը իր հօր, որ մտքի և սրտի գեղեցիկ յատկութիւններով օժտված մի անձ էր։ Իր աղայ հասակէն առանձին ընդունակութիւն և սէր ցոյց տուաւ դէպի երաժշտութիւնը մասնաւորապէս, գեղարուեստները առհասարակ և միայն իր մօր խորհրդին և խնդրանաց անսալով, թողուց զինքը բոլորովին երաժշտութեան նուիրելու գաղափարը, աւարտեց իր գիմնազիական ուսումները և մտաւ Գրայֆսվալդէի համալսարանը պարապելու համար բժշկական ուսումներով։ Այդ ժամանակ բժշկական դիտութիւնը վերածված էր ի Գերմանիա և ըրած նշանաւոր քայլեր դէպի յառաջ, շնորհիւ Լանդէնբէքի, Բաամի, Յոհաննէս Միւլլէրի, Ֆրէրիխսի, Շէօնլայնի և այլոց, որք կը դասախօսէին Գրայֆսվալդէի, Բէրլինի և Գէօթինգէնի համալսարաններուն մէջ։ Բիլրօթ իբրև ուսանող այցելեց այդ համալսարանները և ծանօթացաւ այդ անձերու հետ, տանելով իր հետ խորին ապաւորութիւններ, որք իր մէջ խանդ և գրգիռ արծարծեցին հետևելու այդ վարպետներու շաւղին։ 1853 թուին, արդէն բժիշկ, կուգայ Բիլրօթ ի Վիէննա լսելու Օպպոլցէրի, Հէբրաի դասերը։ Իր ի Բէրլին վերադարձին, կը լինի Ֆոն Լանդէնբէքի օգնականը և կը մնայ այս պաշտօնի մէջ անընդհատ 6 տարիներ և այս միջոցի մէջ կը գործէ ոչ թէ միայն իբրև բժիշկ, այլ նաև կը հիմնէ իր համբաւը իբրև գիտուն, վիրաբուժութեան մէջ դարագլուխ կազմող հրատարակութիւններու մի երկար շարքով։

1859 թուին, երեսուն տարեկան հասակին մէջ, կը կոչվի Ցիւրիխի համալսարանը իբրև պրոֆէսօր վիրաբուժութեան։ Այս քաղաքի մէջ կը ծանօթանայ և մտերմութեամբ կը կապվի Ռիխարդ Վագնէրի հետ։

1865-ին պրոֆէսօր Շուհի մահուամբը թափուր մնացած էր Վիէննայի վիրաբուժական ամբիոնը։ Պրոֆէսօրներու ժողովը միաձայն կոչէ կոչել Բիլրօթ, իբրև Շուհի ամենայարմար յաջորդը։ Բիլրօթ կընդունի այդ հրաւէրը, կուգայ ի Վիէննա և կը մնայ հոն մինչև իր կեանքի վախճանը։

—

Երբ տասը տարի յառաջ եկայ ի Վիէննա և արձանագրվեցայ իբրև բժշկութեան ուսանող համալսարանի մէջ, Բիլրօթ արդէն հասած էր պատուոյ և փառքի գագաթնակէտը։ Անխիլ ամեն մարդ խորին համակրութեամբ և ամենաանկեղծ սիրով կը խօսէր իր վրա։ Այս սէրը, անոնց համար որ Բիլրօթի հետ մօտէն ծանօթ էին և կամ նրա բարեկամութեան արժանացած, ինչպէս ուսանողները և իր աշակերտները, Cultus-ի հանգամանքը առած էր։ Պրոֆէսօրներու մէջ ամենէն ժողովրդականն էր և այս բանին նպաստած էին իր յանդուգն և յաջողութեամբ պսակված գործողութիւնները այնպիսի դէպքերու մէջ, ուր հիւանդին կեանքը իբրև կորված նկատված էր։ Կիները մանաւանդ, որք առհասարակ դատելու նուազ ընդունակ են քան այր մարդերը և նուազ հակամէտ երևոյթներու բուն պատճառները փնտռելու և գտնելու, կը կարծէին տեսնել Բիլրօթի մէջ մի գերմարդկային էակ, մտքի և ձեռքի արտասովոր կարողութիւնով և ճարտարութեամբ օժտված։ Իմ գալէ մի տարի յառաջ, 1882-ին, մի անսման ցոյց տեղի ունեցած էր ի պատիւ Բիլրօթի և իր վարպետը, պրոֆէսօր Լանգենբէք, խոր ծերութեան մէջ քաշված լինելով Բերլինի վիրաբուժական ամբիոնէն, Բիլրօթ հրաւիրված էր իբրև նրա յաջորդը։ Ցեղիս համալսարանին թախանձանքը տեղի տալով, Բիլրօթ մերժեց Բերլինէ եկած հրաւէրը և մնաց ի Վիէննա։ Բժշկութեան ուսանողները մի ահագին թափօր կազմած ջահերով անցան քաղաքին մէջէն և գնացին Բիլրօթի բնակարանի առջև կանգ առնուլ։ Երգերով և կեցցէներով յայտնեցին իրենց ուրախութիւնը և շնորհակալութիւնը, որ Բիլրօթ, իրենց սիրելի ուսուցիչը չը մեկնեցաւ Վիէննայէ։ Այս ցոյցը այնքան խոր տպաւորութիւն թողած էր Վիէննայի ժողովրդին վրա, որ դեռ մի տարի վերջը ընդհանուրին խօսակցութեան առարկան էր և այսօր շատեր անշուշտ նորէն պիտի յիշեն դայն։

Երբ արձանագրութիւնս կատարված էր և ալ կարող էի զբաղվել իմ ուսումներով, գնացի մի օր Բիլրօթի լսարանը տեսնելու համար զինքը։ Ցիրաւի մի գեղեցիկ և պատկառելի ծերունի էր, միջին հասակով, բարեկազմ և թիկնաւէտ, արդէն սպիտակացած մօրուքով և մազերով, որք պէտք է երբեմն ոսկեգոյն եղած լինէին։ Առանձին ուշադրութիւնս գրաւեց իր լուրջ և հանդարտ կերպարանքը։ Ի հարկէ, տարիներու ընթացքին մէջ իր անձի հետ աւելի ծանօթանալով, այն ժամանակ-

տենկօֆէրի և Պօրտուգալօվի զեկուցումներից։ Ընդհակառակը, ֆրանսական լիցէներում պահանջվում է 15 մետր խոր., Բավարիայում 20 մետր, էլ չեմ խօսում Անգլիայի մասին, որտեղ դպրոցական առողջապահութիւնը լաւ մշակված է։

Մեր տուած չափը ցանկալի էր, որ ընդունվէր իբրև ամենափոքր, minimum, և դպրոցները աշխատէին աւելի մեծ քանակութեան օդ տալ իրանց սաներին, չը մոռանալով, որ մանկան մատաղ թոքերը լայնանալու և զարգանալու համար մեծ քանակութիւնով թարմ օդի կարիք ունեն։ Չը պէտք է մոռանալ, որ դասարանի օդը չափազանց արագ կորցնում է իր թթուածինը, մեր կեանքի այս անհրաժեշտ տարրը, և որ իւրաքանչիւր շնչառութեան հետ ամեն մի երեխայ դուրս է թողնում իր թոքերի միջից օդը անմաքուր դարձնող գազեր։ Դեռ Ժան Ժակ Ռուսսոն ասում էր. «մարդու չունչը մարդու համար թոյն է»։

Բժշկապետ Վ. Արծրունի

ԹԻՖԼԻՍԻ ՀԱՅ-ԿԱԹՈԼԻԿՆԵՐԻ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՀԱՐՑԸ

—

Ինչպէս յայտնի է, անցեալ տարվայ մայիսին Թիֆլիսի հայ-կաթոլիկների համար հրատարակվեց 14 յօդուածներից բաղկացած մի օրէնք, որով Բարձրագոյն հրամայվում է, որ Թիֆլիսի Միջնփողոցում գտնվող Ս. Աստուածածին կաթոլիկ եկեղեցին առնեն լատին կղերականների ձեռքից և յանձնեն հայ-կաթոլիկ քահանաներին։ Բացի դրանից, օրէնքը պատիրում է, որ մի սեմինարիա էլ բացվի հայ-կաթոլիկների համար Թիֆլիսում, ուր կարող լինեն կրթվել հայ-կաթոլիկ պատանիները։ Այդ օրէնքը հետևանք է Թիֆլիսի հայ-կաթոլիկների՝ կառավարութեանն ուղղած այդ նպատակին ծառայող խնդիրների։

Աւելորդ է ասել, թէ ինչքան ուրախալի է կառավարութեան այդ վճիռը։ Դրանով Թիֆլիսի հայ-կաթոլիկները ազատվելով լատին կղերականների ճանկերից, վերջապէս կարող կը լինեն ազատ շունչ քաշել։ Եկեղեցին մի փառաւոր շինած տաճար է, գտնվում է քաղաքի կենտրոնում և այնքան հարուստ է թէ դրամագլխով և թէ կալուածքներով, որ սեմինարիան պահպանելու համար այլ ևս որ և է զոհաբերութիւն չի հարկաւորվի և արդէն եկեղեցու գաւթում կառուցված է մի ընդարձակ հոյակապ շինութիւն, ուր կարելի տեղաւորել սեմինարիան։ Այդ շինութեան մէջ այժմ գտնվում է լատին կղերականների երկսեռ ծխական դպրոց, որը ներկայանում է այժմ իր ահագին ծախսերով հանդերձ իբրև մի ողորմելի մեդրէսէ...

Կառավարութեան այդ վճիռը, կամ Թիֆլիսի հայ-կաթոլիկների հարցի այդ կերպով լուծումը ոչ թէ միայն ուրախալի է Թիֆլիսի հայ-կաթոլիկների համար, այլ նոյն իսկ ամբողջ Անդրկովկասի հայ-կաթոլիկների համար, որ կազմում են մի պատկառելի թիւ (34,732 հոգի,—1885 թվի ցուցակագրութեամբ), քանի որ Թիֆլիսը այժմ նրանց համար կը դառնայ մի մտաւոր կենտրոն, ուր հայ-կաթոլիկ պատանիները կը ստանան մայրենի լեզուով լաւ կրթութիւն։ Բացի դրանից ամբողջ Անդրկովկասի հայ-կաթոլիկների համար Թիֆլիսը կը ներկայանայ իբրև նրանց մտաւորբարոյական ուղեցոյց, նրանց մէջ ինքնաճանաչումը ներշնչող, նրանց մտքերը զարթեցնող...

Սակայն վերոյիշեալ վճիռը, որը պէտք է գործադրվէր ներկայ տարվայ յունվարի սկզբին, մինչև այժմ դեռ չէ գործադրված այն պատճառով, որ լատին կղերականները, վրացախօս հայ-կաթոլիկների հետ միասին, փորձել են նորից մի խնդիրք ներկայացնել կառավարութեան, կամ աւելի ճիշտն ասած՝ նրանք մի խորամանկութեան էլ են դիմել, որպէս զի եկեղեցին իրանց ձեռքում մնայ։ Այդ խնդիրքում նրանք աշխատում են ապացուցանել, որ յիշեալ եկեղեցին ոչ թէ հայ-կաթոլիկների շինածն է, այլ 1844 թուին Թիֆլիսից արտաքսված կապուցին ուխտին պատկանող կաթոլիկ եղուիտների շինածն է, ուստի եկեղեցին պէտք է իրանց ձեռքում մնայ։ Այդ է խնդիրքի էական մասը և հիմքը, որով և իրանց իրաւունք են համարում եկեղեցուն տիրապետել։

Թէ ովքեր են շինել այդ եկեղեցին և ում համար, այդ մասին կան պաշտօնական տեղեկութիւններ, որոնց առաջ կը բերենք մի ուրիշ անգամ։

Առ այժմ այսքանը կասենք. ճշմարիտ է, այդ եկեղեցին շինվել է կապուցինների օրով. բայց երբ նրանց հեռացրին Թիֆլիսից՝ եկեղեցին յանձնեցին հայ-կաթոլիկ քահանաներին, և ոչ թէ լատին կղերականներին, որովհետև այդ եկեղեցին շինված էր հայ-կաթոլիկների համար և նրանց միջոցներով.— այդ դուք շատ լաւ գիտէք։ Չէք մոռացել նոյնպէս, որ դուք մուտք գործեցիք այդ եկեղեցին այն պատրուակով, որ ժամանակաւորապէս մնաք մինչև ձեր Կուկիա թաղամում գտնվող եկեղեցին շինվի, բայց երբ 1877 թուին եկեղեցին աւարտվեց, փոխանակ ինքներդ տեղափոխվելու այնտեղ, խորամանկութիւններով հեռացրիք այդտեղից հայ-կաթոլիկ քահանաներին և նրանց եկեղեցին խլեցիք։ Դուք լաւ գիտէք նոյնպէս, որ կապուցինները այդ եկեղեցում հայ-կաթոլիկ քահանաների հետ միասին ժամասացութիւնը կատարում էին միայն հայերէն լեզուով, իսկ դուք, որ ձեզ նրանց ժառանգ էք հռչակում և ինքներդ հայեր էք, ինչու նոյն լեզուով չէք կատարում ժամերգութիւնը. չէ՞ որ դուք էլ այդ լեզուն շատ լաւ էք հասկանում։

Վերջապէս դուք ոչ մի կողմից իրաւունք չունէք կապուցինների օրով շինված այդ եկեղեցին ձեզ սեփականացնել, նախ՝ որ այդ եկեղեցին շինված է հայ կաթոլիկների միջոցներով և նրանց համար։ Երկրորդ՝ կապուցինները, ինչպէս աքսորեալներ, հեռացել են Թիֆլիսից՝ ոչինչ կապ չը թողնելով, որ դուք կարող լինէիք ժառանգել. իսկ եթէ այդ եկեղեցին էլ նրանց սեփականութիւն լինէր, այնուամենայնիւ, պէտք է ժառանգէ նրանց այն հօտը, այսինքն հայ-կաթոլիկները, որին նրանք հովում էին և ոչ թէ դուք, որ ոչ պատկանում էք կապուցինների ուխտին և ոչ էլ մի կօպէկ էք զոհել այդ եկեղեցու կառուցման ժամանակ։

Բայց դուք ուզում էք խորամանկութեամբ ձեր նպատակին հասնել։ Սակայն այդ ձեզ չի աջողվի։

Հայ-կաթոլիկ

ՆԱՄԱԿ ՆՈՒԽՈՒՑ

—

25 յունվարի

Բարեգործական ընկերութեան տեղական ճիւղի վարչութիւնը դիմեց ուր հարկն է՝ գրատուն-ընթերցարան քանալու իրաւունք ձեռք բերելու համար։ Նախընթաց տարվայ հոկտեմբեր ամսի վերջը ստացվեց այդ իրաւունքը, որին անհամբեր սպասում էր ընթերցանութեան ծարաւ հասարակութիւնը և մշակելով կանոններ ու ներքին հրահանգներ՝ վերջապէս անցեալ կիրակի օրը, ամսիս 23-ին, պաշտօնապէս մի համեստ հանդիսով բացվեց տեղիս վարչութեան կից գրատուն-ընթերցարանը։

Բացման հանդէսը չքեղ կացուցանելու համար, վարչութիւնը վաղօրօք խնդրել էր տեղիս յաջորդ Ց. վ. Խարազեանցից, որ իր և քաղաքիս քահանաների ներկայութեամբ պատուէ հանդէսը։ Սակայն յաջորդը բացակայ էր, և նրա բացակայութեան պատճառով սովորական հանդիսատէրն էր Սիմէոն քահանայ Տէր-Պողոսեանցը։

Բացման հանդիսին ներկայ էր մեծ բազմութիւն, որն առանձին հետաքրքրութիւն է ցոյց տալիս դէպի այս նոր և համակրելի հիմնարկութիւնը։ Հանդիսին ճառ խօսեց ուսուցիչ Քուշմանեանը։

Արդիօք հասարակութեան այդ հետաքրքրութիւնը դրական չէ գրատուն-ընթերցարանի առաջիկայում ունենալիք աջողութեան, որն անշուշտ կախված կը լինի յաճախորդների քանակութիւնից։

Վարչութիւնն արդէն կազմել է հայերէն և ռուսերէն գրքերի ցուցակ՝ մօտ 400 բուրլու, որը և շուտով կուղարկէ Թիֆլիսի խորհրդին, որպէս զի խորհուրդը նեղութիւն կրի դիւրամատչելի գներով ձեռք բերելու։ Գրատուն-ընթերցարանն այս տարվայ համար, նուէրներով հանդերձ, 136 ր. 50 կօպէկի պարբերական հրատարակութիւններ է ստանում, այն է «Հանդէս Ամսօրեայ», «Մուրճ», «Արևելք», «Մշակ», «Արձագանք», «Արաքս», «Հանդէս Գրականական», «Աղբիւր», «Արարատ ամսագիր», «Кавказъ», «Новое Обозрѣніе», «Вѣстникъ Европы», «Русская Мысль», «Будильникъ», «Новости», «Нива» և այլն։

Բացի յիշեալ թերթերից, գրադարանի անունով ստացված են զանազան անձինքներից մի քանի կտոր գրքեր։ Ցայտնելով Նուխու նորաբաց գրադարան-ընթերցարանի այժմեան վիճակը, յոյս ունենք, որ մեր հեղինակները, թարգմանիչները և հրատարակիչները և առհասարակ ընթերցանութեան բարեկամները չեն զլանայ իրանց կողմից օգնել այդ համակրելի հիմնարկութեան։

Հան.

ՆԱՄԱԿ ՂԱՂԱՐԻՑ

—

Յունվարի 26-ին

Երկաթուղու հարցը, որ ամենից երաշ էր թվում, այժմ կարծէք քիչ քիչ իրականութիւն է ստանում։ Յունվարի 17-ին այստեղ եկաւ կառավարութեան կողմից նշանակված ինժենէրը, որը քննում էր Պետրովսկ-Վլադիկավկազեան գծից դէպի Ղղար մի ճիւղ անցկացնելու ճանապարհը. նա իսկոյն ժողով կազմեց և յայտնեց որ Ղղարից ճիւղ կարելի է շինել նախ՝ Թասաւիրաի և երկրորդ՝ Ղազի-Իւրտի վրայով և նա յարմար էր գտնում երկրորդը, որովհետև ճանապարհը 20 վերստով պակասում է։ Նա հաւատացնում էր, որ այդ գիծը անպատճառ կարող է գլուխ գալ, որովհետև տարածութիւնը չնչին բան է՝ 45—65 վերստ և ճանապարհը միանգամայն հարթ, ոչ մի կամուրջի և աւելորդ ծախսերի տեղիք չը կայ։

Ժողովից յետ անմիջապէս՝ այդ խնդիրը առաջ տանելու համար կազմված մասնախումբը ինժենէրի հետ՝ գնացին կայարանի տեղը որոշելու և առ այժմ ի նկատի առած տեղը քաղաքից հեռու է 1½ վերստ՝ Թերեքի միւս ափում, ս. Գէորգ ավտատեղիի դիմաց։ Եթէ գիծը քաղաք բերվելու լինի, այն ժամանակ հարկ կը լինի գետի վրա մի մեծ կամուրջ շինել, որ կարժենայ առնւազն 500,000 բուբլի։ Առ այժմ ինժենէրը գնաց Վլադիկավկազ, պատուիրելով մասնախմբին, որ չափեն գետի խորութիւնը և կազմեն Ղղարի մանրամասն յատակագիծը՝ մինչև իր վերադառնալը, այսինքն մինչև փետրվարի 5-ը։

Այս փոքրիկ հետազօտութեան համար քաղաքի արկղը վճարեց 2000 ր. սակայն դրանով չը պէտք է բաւականանայ քաղաքը, այլ ամեն ճիգ

վայ այս անկատար պատկերը ամբողջացուցի։ Իր աչքերը մեծ և կապոյտ էին, հանդարտ և երազող նայուածքով։ Ճակատը լայն և բարձր, քիթը չափաւոր և թեթևապէս կոր, իսկ ամբողջ դէմքը մի շատ համակրելի և ազնուական արտայայտութիւն ունէր։ Իր ամբողջ անձի մէջ մի հայրապետի վեհութիւնը և բարութիւնը կար և չէր կարելի իրմէ բաժանվել առանց միասին տանելու սա տպաւորութիւնը, թէ նա մի արտասովոր անձնաւորութիւն է։

Սակայն Բիլրօթ ոչ թէ միայն մեծ վիրաբոյժ և մեծ գիտուն եղաւ, այլ նաև մի վիրաբուժական մեծ դպրոցի հիմնադիրը։ Իր աշակերտները լէգէօն կը կազմեն և նոցա մեծ մասը գերմանական, աւստրիական և հոլլանդական համալսարաններու զարդն են իբրև վիրաբուժութեան ուսուցիչներ։ Պրոֆէսորք Բէրգման ի Բէրլին, Զէրնի ի Հայդելբերգ, Վէօլֆլէր ի Գրաց, Նիքօլադոնի Ինսբրուք, Միքալիչ ի Բրէսլաւ, Ադամքիէվիչ, Էյզելսբերգ և այլ շատեր իր դպրոցէն դուրս եկած են։ Հայրական սիրով կը սիրէր իր աշակերտները, կը դրդէր գիտական լուրջ հետազօտութիւններու և փորձերու, կը մասնակցէր նոցա աշխատութեանց և իր վայելած մեծ ազդեցութեամբ և տիեզերական համբաւով կը բանար նոցա առաջ լայն ասպարէզներ, ուր նոքա կարող կը լինէին իւրանց կարողութիւնը և տաղանդները ի հանդէս բերել, ինքնուրոյն շարունակելով ինչ որ սկսած էին մեծ վարպետին քով և միշտ հաւատարիմ նորա նշանաբանին. ճշմարտութիւն և լոյս։

Բիլրօթի սիրտը ջերմօրէն կը զգար տառապող մարդկութեան համար և տեսնելով, թէ միջնակարգ դասէն շատեր, կին, այր և տղայ, որք վիրաբուժական դարմանի պէտք ունին, սակայն կը դժկամակին մտնել քաղաքային հիւանդանոցները, իսկ կը խորշին մասնաւոր հիւանդանոցներէ՝ հոն տիրող թանգութեան պատճառով, ձեռնարկեց հիմնել մի հիւանդանոց, օրինակելի թէ իբրև շէնք և թէ իբրև կազմակերպութիւն, երեք կարգերու բաժանված, ուր վերոյիշեալ դասին վերաբերող և վիրաբուժական դարմանի կարօտ անձեր կը գտնեն բժշկական ընտիր խնամք, մնոնդ և ծառայութիւն, մի թեթև վճարման փոխարէն։ Այս հիւանդանոցի շինութեան համար նուիրեց Բիլրօթ իր կողմէ աւելի քան 50,000 աւստրիական ֆլորին, իսկ մնացեալ ծախքը հոգացին ժողովրդեան զանազան դասակարգերը, որոց դիմած էր Բիլրօթ մամուլի միջոցով։ Այս հիւանդանոցը նուիրվեցաւ հանգուցեալ գահաժառանգի անունը և կը կոչվի Ռուդոլֆինում։

—

Իսկ միթէ կարելի է մոռանալ Բիլրօթ իբրև աշխարհեկ և գեղարուեստներու, ի մասնաւորի, երաժշտութեան սիրահար մարդ։ Քաջ անատոմ և իր բնածին զգացումը և սէրը դէպի գեղեցիկը դասական լուրջ ուսումներով մշակած, Բիլրօթ արագ և անվրէպ կերպով կը տեսնէր մարդկային մարմնի այս կամ այն մասի թերութիւնը, թէև այդ թերութիւնը երբեմն այնքան փոքր լինէր, որ մեզ համար կորուսէր ամբողջին նկատողութեանը մէջ։ Նա մեր ուշադրութիւնը կը դարձնէր այդ թերութեան վրա, մի պահ ուշիւ կը զննէինք և կը համոզվէինք թէ իրաւունք ունէր։ Սակայն Բիլրօթ գերազանցեց երաժշտութեան մէջ. նա մի առաջնակարգ դաշնակահար էր և կը սիրէր Բրամս մեծանուն երաժշտին, իր մտերմին հետ քառաձեռն ածել դաշնակի վրա։ Անմոռաց պիտի մնան իր երաժշտական փայլուն երեկոյթները, երեկոյթները, որք կը նուագէին իր սրահներուն մէջ գեղարուեստի, գիտութեան և գրականութեան ամենէն ականաւոր ներկայացուցիչները։

Երկայն ուղևորութիւնները մեծ հաճոյք կը պատճառէին Բիլրօթի։ Նրա վառ երևակայութիւնը, նրա քանաստեղծի սաւառնող հոգին պէտք ունէր լայն անջրպետներու. ուստի ամեն տարի, մեծ և փոքր արձակուրդներու միջոցին, կը թողուր Բիլրօթ Վիէննա առանձին կամ իր երկու աղջիկներու ընկերութեամբ և կանցնէր Եւրոպայի զանազան մասերը, հետաքրքիր տեսնելու այլ ժողովուրդներ, այլ բարքեր և այլ կեանք, և կամ դրապուրված այդ մասերու բնական գեղեցկութիւններէն, որոց մասին լսած կամ կարդացած էր։ Բիլրօթի անհուն սիրովը և տենչովը վառված, այդ երկար և ըստ մեծի մասին ծովային ճանապարհորդութիւններու մէջ կը գտնէր անպատմելի բերկրութիւն և զոհունակութիւն։ Դեռ մի քանի տարի յառաջ, երբ ըստ երևութին բոլորովին առողջացած էր սրտի հիւանդութիւնէն, անցաւ Սպանիա, այցելեց այդ երկրի հետաքրքրական տեղերը. յետոյ յաջորդ տարին գնաց Եգիպտոս և երբ գարնան սկիզբը վերադարձաւ, իր բարեկամները, ծանօթները անհուն ուրախութեամբ տեսան նրա առողջ և գոհ տեսքը։ Հարաւի զօրեղ արևը նոր ոյժ և նոր թարմութիւն տուած էր Բիլրօթի մարմնին և իր սևացած դէմքը մի տարօրինակ, սակայն գեղեցիկ հակապատկեր կը ներկայացնէր իր կապոյտ աչքերուն հետ։ Բիլրօթ աշխոյժով վերսկսաւ իր գործունէութիւնը, անցուց ամառը բաւական հանգիստ իր չքեղ վիլլային մէջ, որ մի անտառոտ բարձունքի վրա կառուցված կը տիրապետէ Վերին-Աւստրիայ ամենահիանալի ծովակներէն մին, Վոլֆգանգ-զէէ, իր ամբողջ տարածութեամբ։

Բիլրօթի վերջին լուսանկարը կը ներկայացնէ զինքը հոն կանգնած պատուհանին առջև խորասուզված ծովային նկատողութեանը մէջ։ Նշանակելի է Հէյբէլի մի բանաստեղծութիւնէն առնուած հետևեալ տողը, զոր Բիլրօթ ինքը գրած է լուսանկարին տակը.

Աշնան մի չքեղ օր էր,
Որի նմանը դեռ տեսած չէի։

Այսպէս անցաւ աշունը։ Դասերը վերջացան և Բիլրօթ վերադարձաւ Վիէննա տանելի վիճակի մէջ։ Անցեալ տարվայ վերջերն էր, երբ տեղեկացանք, թէ իր առողջութիւնը նորէն վատացած է և շնչարգելութիւնը վերստին երևան եկած։ Բիլրօթ յանձնեց դասերը իր օգնականին և գնաց Աբբացիա, հոն հարաւային մեղմ կլիմայի տակ անցնելու ձմեռը։ Երէկ գրած էր Վիէննայի իր մի բարեկամին, թէ կը յուսայ մարտի սկիզբը ետ լինել։ Այս լուրը մեծ ցնծութիւն պատճառեց։ Այսօր սակայն իր մահուան գոյժը հասաւ։

Օրհնվի մարդկութեան այս մեծ բարեկամի յիշատակը։

Դոկտոր Վահէ Մինասեան

պէտք է թափի գլուխ բերելու այդ կարեւոր գործը, որը միակ միջոցն է ազատելու Ղղարը մօտաւոր տնտեսական անկումից։ Ժամանակ է արդէն, որ մեր աղա-հարուստներն էլ թողնեն իրանց չկամութիւնները, և միացած ոյժերով սկսեն գործը։

Գ. Ե.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Լսում ենք, որ Գէորգ եպիսկոպոս Սուրէնեան հաստատված է Վրաստանի և Իմերէթի թեմի առաջնորդ։

—

Պետերբուրգից մեզ հեռագրում են, որ սենատը, Կուկունեանի և խմբի գործը լսելով, հաստատեց դատաստանական պալատի վճիռը։ Այդ մասին Պետերբուրգից մեզ գրում են. «Յունվարի 27-ին սենատում նշանակած էրկուկունեանի և խմբի գործի քննութիւնը։ Փաստաբան Միրօնով իր ճառով ցոյց տուեց, որ նահանգական դատարանի և դատաստանական պալատի դատողութիւնների հիմքը սխալ է և հակառակ օրէնքի մի քանի յօդուածներին։ Դատարանները չունեն բաւականաչափ փաստեր, որոնցով կարողանային հաստատել, թէ այդ ընկերութիւնը, որի գլխաւորն էր Կուկունեանը, մի աւազակային խումբ է։ Փաստաբանը հաստատում էր, որ այդ ընկերութիւնը իր խմբապետով հանդերձ ուրիշ նպատակ ունէր, որ նոյն իսկ ինքը դատարանը հակակրելի չէ գտնում. և այն մի քանի սպանութիւնները և սահմանապահ կօզակներին դիմադրութիւնը պատահական դէպքեր են՝ խոչնդոտներ դէպի գլխաւոր նպատակը տանող ճանապարհի վրա. հետեւապէս եթէ ընկերութիւնը չէ կազմված յատկապէս սպանութիւններ գործելու և իշխանութեան դիմադրութիւն ցոյց տալու համար, այդ դէպքերի համար պատասխանատու են նրանք, որոնք մասնակցել են դրանց մէջ և ոչ ամբողջ ընկերութիւնը իր խմբապետով։ Կուկունեանը խմբապետ չէ այն ընկերութեան, որի նպատակը լինէր սպանութիւններ գործել և ռուս իշխանութեան դիմադրութիւն ցոյց տալ, այլ նա խմբապետ է մի ընկերութեան, որի նպատակը միանգամայն ուրիշ է։ Փաստաբանի ճառը իր մանրամասնութիւններով շատ համոզեցուցիչ էր և առողջ հիմքերի վրա հաստատած։ Պրոկուրորը իր հակաճառութեան մէջ վերջը ընդունեց փաստաբանի կարծիքը, որով խախտվում էին օրէնքի երկու յօդուածները, բայց վերջինս այդ խախտումները համարում էր ոչ էական, այլ շատ չնչին, որոնց կարելի է թողնել առանց ուշադրութեան։ Վերջնական վճիռը իսկոյն չը կայացաւ։»

—

Լսում ենք, որ կառավարչական շրջաններում հարց է յարուցած սերմացու տալ այն գիւղացիներին, որտեղ անցեալ տարվայ հունձի վատութեան պատճառով ժողովուրդը սերմացու չունի։

—

Անցեալ անգամ հաղորդեցինք, որ Ամերիկա գաղթած հայերը իրանց համար հիմնում են փոքրիկ հայոց գրադարաններ։ Այդ մասին մեզ հաղորդում են, որ գրադարաններ արդէն հիմնված են հետեւեալ տեղերում՝ Ուստր, Լին, Բոստոն, Լօրէնս, Լօվէլ, Հիվրհէլ, Նիւ-Եօրկ, Չիկագօ, Պրովիդենս, Ֆիլադելֆիա և Ֆիչբուրգ։ Ներկայումս Ամերիկայի Միացեալ Նահանգներում հայերի թիւը հասնում է 10 հազարի, որոնք բոլորն էլ գաղթել են Թիւրքիայից։

—

Մեզ հաղորդում են հետեւեալը.—Էջմիածնի ուսումնարանական յանձնաժողովը դիմել է թեմական տեսուչներին, առաջարկելով իմանալ ուսուցիչների կարծիքները դասընթացների ծրագրի մասին և հաւաքած տեղեկութիւնները հասցնել Էջմիածին՝ մի ամսվայ ընթացքում։ Լսում ենք, որ Թիֆլիսի թեմում այդ տեղեկութիւններն արդէն հաւաքվում են։

—

Լսում ենք, որ Կարսում կազմված մասնաժողովի գլխաւոր նպատակն է օգնել այն գաղթականներին և աղքատներին, որոնք այժմ բնակութիւն են հաստատել Կարս քաղաքում։

—

Լրագիրները հաղորդում են, որ այս ամսին նորից դասեր կը սկսվեն Թիֆլիսի ուղղափառ հոգևոր սեմինարիայում։

—

Յօգուտ Գրիգոր Արծրունու արձանի և գրուածքների տպագրութեան ստացանք. 1) Երևանից, պ. Ռուբէն Չալալեանի միջոցով, 72 ռուբլի (Երևանում հանդանակութիւնը շարունակվում է և ժամանակին մենք կը տպագրենք նուիրատուների ցուցակը). 2) Թիֆլիսից, Յովհաննէս Սաեփանեանից 5 ռուբլի. 3) Ղուբայից, Գէորգ Բուղդանեանի միջոցով, 30 ռուբլի, հանգանակած հետեւեալ անձինքներից. Մ. Սալամբէգեանց, Գ. Բուղդանեանց—երեքական ռուբլի. Ի. Բուղդանեանց, Մ. Ամիրջանեանց, Բալասեանց, Ջ. Բարսեղեանց, Յ. Յովհաննէսեանց երկու-երկու ռուբլի։—Ոմն, Ե. Յովհաննէսեանց, Ղ. Գասպարեանց, Յ. Ասրիեանց, Մ. Յարութիւնեանց, Օ. Տէր-Օհանեանց, Հ., Կ. Թաւրիզով, Պ. Յովհաննէսեանց, Դ. Ռուստամեանց, Ս. Ջիջիեանց, Ն. Քարհանեանց, Ե. Բաբաեանց, Բ. Բաղիրեանց՝ մի-մի ռուբլի։ Ուրեմն նախկին 2065 ռուբլի 16 կոպէկի հետ այժմ ունենք 2172 ռուբլի 16 կոպէկ։

—

Մեզ հաղորդում են, որ Յովհաննեան օրիորդաց դպրոցը, որ կարող է պարծենալ իր ահագին շինութեամբ, ուսուցչական սենեակ անգամ չունի, որտեղ վարժապետները կարողանային պատսպարվել դասամիջոցներին։ Նախկին ուսուցչական սենեակը դասարան է դարձրած, իսկ դասարանը միացրած է տեսչի ընակարանին։ Սա էլ դուցէ Յովհաննեան դպրոցում տիրող օրինակելի կարգերի մի նոր ապացոյցն է։

—

Մեզ հեռագրում են Նոր-Նախիջևանից, փետրվարի 6-ից. «Հասարակութեան ցանկութեամբ պ. Կարա-Մուրզան տալու է երկրորդ կօնցերտ, նոր պրոգրամով, փետրվարի 11-ին»։

—

Կիրակի, ամսիս 6-ին, Թիֆլիսի ժողովարանում կայացաւ Կովկասի հայոց Բարեգործական ընկերութեան պարահանդէսը, որ, ինչպէս միշտ, այս անգամ ևս ահագին բազմութիւն էր գրաւել։ Ժողովարանի դահլիճներում տիրում էր արտասովոր կենդանութիւն։ Պարերը տեւեցին մինչև գիշերվայ ժամը 4-ը և առհասարակ ամբողջ երեկոյթը շատ չքեղ ու փառաւոր էր։ Արդիւնքի կողմից այդ երեկոյթը գերազանցում է բոլոր նախկին երեկոյթներին։ Ի նկատի ունենալով, որ ամբողջ ծախսը, մօտ 350 ր., իր վրա է առել խորհրդի փոխ-նախագահ պ. Ալէքսանդր Մանթաշեան, զուտ արդիւնք կը մնայ մօտ 2000 ռուբլի։ Երեկոյթի աջողութեանը շատ նպաստել է տիկին Մանթաշեանց, որը սիրալիր կերպով յանձն էր առել երեկոյթի կառավարչուհու պաշտօնը։ Երեկոյթին ներկայ էին ոչ միայն հայոց հասարակութեան զանազան շրջանները, այլ և բազմաթիւ ռուս և վրացի հիւրեր, որոնց թւում Թիֆլիսի նահանգի այժմեան կառավարիչ կոմս Տիզենհաուզէն, մի քանի հիւպատոսներ, և այլ աստիճանաւորներ։

—

«Հայրենիք» լրագիրը հաղորդում է մի ուրախալի լուր,—մի հայուհի ներկայումս Շօտլանդիայում բժշկութիւն է սովորում։

—

Այս տարի, մայրաքաղաքի լրագիրների խօսքերով, կը լրանայ երեսուն տարի այն օրից, որ կանանց իրաւունք տրվեց ծառայել հեռագրատներում։ Ներկայումս պետական ծառայութեան մէջ են գտնվում 800-ից աւելի կին-տելեգրաֆիստներ։

—

Մեզ հաղորդում են, որ այս օրերս Արքունական թատրոնում լինելու է մի ներկայացում յօգուտ Բարեգործական ընկերութեան կենտրոնական գրադարան-ընթերցարանի, որ շուտով պէտք է բացվի։ Լսում ենք, որ մեր շնորհալի երգչուհի օրիորդ Պապայեան պէտք է երգէ այդ ներկայացմանը։

—

«Нов. Обозр.» լրագրի մէջ կարդում ենք. «Ի նկատի ունենալով այն, որ կառավարչական բարձր շրջաններում արդէն սկզբունքով վճռված է Կարսի շրջանում մէկ շարք դպրոցներ բանալու հարցը, որոնց ծախսը պէտք է հոգացվի պետական գանձարանից, ժողովրդական լուսաւորութեան մինիստրը, որպէս մեզ հաղորդում են հաստատ աղբիւրներից, դիմել է կովկասեան գլխաւոր իշխանութեանը՝ խնդրելով հաղորդել իրան, թէ ո՞րքան գումար կը հարկաւորվի վերոյիշեալ նպատակի համար»։

—

Ռուսաց Կայսերական երաժշտական ընկերութեան գլխաւոր վարչութիւնը հաստատել է այդ ընկերութեան Թիֆլիսի բաժնի նորընտիր դիրեկտորներին՝ իշխան Յ. Անդրոնիկովին, Կ. Ալիխանովին և Վ. Կորգանովին։

—

«Մշակի» անցեալ համարում տպած Քամոյեանց եկեղեցու հաշուից երևում է, որ արտասահմանում երկու ուսանողների պահպանութեան համար եկեղեցին տուել է 1893 թվին 1980 ռուբլի։ Այժմ մեզ հաղորդում են, որ տարեկան այդքան փող տրվում էր սկսած 1889 թվի սեպտեմբեր ամսից, հաշուելով իւրաքանչիւր ուսանողի համար ամսական 70 ռուբլի։ Հետաքրքիր է իմանալ, ուր են այդ ուսանողները, ինչ են անում այդքան տարի, արդեօք եկեղեցու ծխականները պահանջել են հաշիւ նրանց ուսման ընթացքի մասին, թէ այն կարծիքի են, որ թոշակաւորները պէտք է շարունակեն անվերջ իրանց ուսումը։

—

Բագուի նաւթարդիւնաբերողների առաջին և երկրորդ դաշնակցութիւնների ներկայացուցիչները՝ պ.պ. Մանթաշեան, Լիանոզեան և Ղուկասեան, «Гражданинъ» լրագրի խօսքերով, Պետերբուրգ են հասել՝ երկու դաշնակցութիւնները միացնելու նախագիծը մշակելու համար։ Յունվարի 28-ին այդ առիթով մասնաւոր խորհրդակցութիւն կայացաւ վերոյիշեալ դեղեգատների և մինիստրութեան պաշտօնեաների մէջ։

—

ԷՋՄԻԱԾՆԻՑ մեզ գրում են. «Կիւրեղ վարդապետ Սրապեանը Աղուանեանցի թաղումից վերադարձաւ և ինչպէս լսեցինք, առանց սինոդի գիտութեան գնաց Ալէքսանդրօպոլ՝ Սաթունեան վարդապետի գործերը քննելու։ Դժուար է հաւատալ այդ լուրին. Կիւրեղ վարդապետի անունը կապված է Ալէքսանդրօպոլի գործերի հետ, և այդ պարզ պատճառով նա այդ գործերի վրա քննիչ լինել չէ կարող»։

—

ԱԼԷՔՍԱՆԴՐՕՊՕԼԻՑ մեզ գրում են. «Մօտ օրերս այստեղ մեռաւ յայտնի հարուստ Բաղդասար աղա Դրամբեանը։ Հանգուցեալը մահից առաջ 1,500 ռուբլի կտակել էր բարեգործական նպատակով, որ և նրա ժառանգները բաժանեցին հետեւեալ կերպով. 800 ռուբլի ս. Փրկիչ եկեղեցու համար մի ջահ գնելու, 300 ռուբլի Բարեգործական ընկերութեան տեղիս ճիւղի բացած էժանագին-ճրի ճաշարանին, 200 ր. աղքատանոցին և 200 ր. Սահակ-Անուշեան օր. դպրոցին»։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՀԱՅԻ ՊԱԿԱՍՈՒԹԻՒՆԸ ԹԻՒՐՔԱՑ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

—

Կ. Պոլսի լրագիրները հաղորդում են հետեւեալը. «Ցայտնի է թէ վերջին երկու տարիներու երաշտութեան պատճառաւ արմտիքի նուազութիւնն ինչքան տագնապալի հանգամանք մը առած է Կարինի նահանգի մէջ։ Ժողովուրդը մեծ դժուարութիւն կը կրէ իր ապրուստին անհրաժեշտ պարէնը հայթայթելու։

«Կառավարութիւնը 70,000 քիլէ արմտիք պատրաստել տուած է, որուն 30,000-ը արդէն Տրապիզոն ղրկուած է՝ Կարին փոխադրելու համար։ Հրամայված է որ Տրապիզոն ղրկուած արմտիքը փութով Կարին փոխադրուի։ Գաւառական իշխանութիւնք պէտք է անյապաղ պատրաստեն փոխադրութեան միջոցները և առ այս հարկ եղած գրաստները գտնեն Տրապիզոնի գաւառակներէն։ Սուլթանը հրամայած է միանգամայն որ ժողովրդին նեղութիւնը թեթեւացնելու համար մինչև հիմա ձեռք առնուած տնօրինութեանց մասին և ապագային այսօրինակ աղէտքի մը առաջքն առնելու համար գործադրուելիք միջոցներուն վրա ճշգրիտ տեղեկութիւն տրուի իրեն։

«Մուշի և Վանի մէկ քանի գաւառներն ալ կը նեղուին արմտիքի նուազութենէն։ Սուլթանին հրամանով, քննութիւն մը բացուած է ճշդիւ գիտնալու համար այդ գաւառակներու բնակիչներուն պէտքերը, փութով հարկ եղած նպաստը ղրկելու համար իրենց։ Ներքին գործոց նախարարութիւնը արդէն տեղեկութիւն խնդրած է տեղական իշխանութիւններէն և ստանալուն պէս պիտի հաղորդէ սուլթանին։

«Սուլթանը տեղեկանալով որ Կարինի մէջ տիրող թանգութեան պատճառաւ շատ աղքատներ Տրապիզոն գաղթած են, անկարող իրենց ապրուստը ճարելու և օրապահիկի կարօտ, հրամայած է բնակութեան տեղ յատկացնել այդ դժբաղդներուն և հոգալ անոնց ապրուստը։

«Սեբաստիոյ կուսակալութեան ալ հրաման ղրկուեցաւ փութով արմտիք հասցնել ի Կարին»։

ՍԵՐԲԻԱՑԻ ՃԳՆԱԺԱՄԻ ՊԱՏՃԱՌԸ

—

«Frankfurt. Zeitung» լրագրի Բէլգրադի թղթակիցը հաղորդում է իր խօսակցութեան մասին նախկին թագաւոր Միլանի հետ, որը բացատրել է նրան Սերբիայի ճգնաժամի պատճառները։

Միլանի խօսքերով, Դօկիչի մահից յետոյ այլ ևս հնար չեղաւ բնական յարաբերութիւններ պահպանել կառավարութեան և արմատական կուսակցութեան մէջ։ Միայն Դօկիչը գիտէր պահպանել այդ յարաբերութիւնները։ Իսկ ընդհանրապէս արմատականները անվիճելի կերպով ապացուցեցին իրանց անընդունակութիւնը՝ կառավարել պետութիւնը։ «Անկասկած, նրանց մէջ կան ընդունակ մարդիկ,—աւելացրեց Միլան,—բայց նրանք փոքրամասնութիւն են կազմում և եթէ նրանք չեն հպատակվում կուսակցութեան պահանջներին, նրանց հեռացնում են։ Բացի դրանից, երկրի մէջ ֆինանսական կատարեալ անկարգութիւն է տիրում։ Ուղղակի հարկերի և պետական հարկերի համարեա կէսը չէ ժողովված։ Ասում են, որ գիւղացիք չեն կամենում հարկերը վճարել։ Դա ճիշդ չէ։ Այդ բանում մեղաւոր են արմատական պաշտօնեաները, որոնք ցանկանալով գրաւել իրանց կուսակցութեան կողմը գիւղացիներին, հարկ չեն առնում նրանցից»։

Միլան հերքում էր այն կարծիքը, որ իբր թէ ինքն դիտաւորութիւն ունի գրաւել իր կողմը Ռիատիչին։ «Ռիատիչ այլ ևս չը կայ,—ասեց Միլանը,—մինչև անգամ նրա սեփական կուսակցութիւնը հեռացել է նրանից։ Մանաւանդ որ, խնամակալութեան ժամանակ նա ոչ միայն չէր աշխատում աղդել կառավարութեան և օրէնսդրական իշխանութեան վրա պահպանողական ոգով, բայց մինչև անգամ կատարեալ ազատութիւն էր տուել արմատականներին, միայն թէ իրան հանգիստ թողնէին. այնպէս որ այժմ նրա վրա է պատասխանատուութիւնն ընկնում այն օրէնքների համար, որոնք վտանգի են ենթարկում գահը և պետութեան շահերը»։

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—Կ. Պոլսից հեռագրում են լրագիրներին, որ Թիւրքիայի և Բոլգարիայի յարաբերութիւնները շատ լարված են։ Վախենում են, որ Ստամբուլով շուտով դժուարութիւններ կը յարուցանի Մակեդոնիայում, որպէս զի վրէժն առնի Թիւրքիայից այն դիրքի համար, որ այդ վերջինը բռնել է բոլգարական այժմեան ըէժիմի վերաբերմամբ։

—Վիէննայից հեռագրում են, որ բոլգարական լրագիրները սպառնում են Թիւրքիային՝ բոլգարական դպրոցները փակել Մակեդոնիայում։

—«Standard» լրագիրը խօսելով ռուս-գերմանական դաշնագրի մասին, ասում է, թէ նա ուղղված է Ֆրանսիայի դէմ և պէտք է ծառայէ խաղաղութեան գործին։ Իսկ Ֆրանսիային անգլիական լրագիրը խորհուրդ է տալիս հանգիստ սրտով վերաբերվել կատարված իրողութեանը և դաշնագիր կապել Իտալիայի հետ այնպէս, որպէս Ռուսաստանը կապեց Գերմանիայի հետ։

—«Русск. Жизнь» լրագրի թղթակիցը հաղորդում է, որ Կրետէ կղզու վրա մեծ յուզմունք է տիրում։ Այդ կղզու քրիստոնեայ աղգաբնակութեան գժգոհութեան պատճառն այն է, որ չորս քրիստոնեայ յանցաւորներին նահանգապետի հրամանով մահվան պատժի ենթարկեցին, այն ինչ մահվան պատժին դատապարտված մի քանի մահմեականներից միայն մէկին պատժեցին, իսկ մնացածներին ներումն շնորհվեց։ Քրիստոնեաները բռնեցին ներումն շնորհված երկու մահմեականներին և կախաղան բարձրացրին նրանց։

—Աւստրիական լրագիրները հաղորդում են, որ մադիարները միշտ գանգատվում էին, որ աւստրօ-ունգարական միապետութեան դեսպանատները և հիւպատոսարանները հանդիսաւոր օրերին պարզում էին միայն սև-դեղին դրօշակներ և մոռանում էին մադիարական ազգային դրօշակը։ Ներերումս Բերլինի աւստրիական դեսպանը հրամայեց, գերմանական կայսրի ծննդեան վերջին

տարեդարձի առիթով, դեսպանատան շինութեան վրա պարզել, բացի սև-դեղին դրօշակից, և մադիարական ազգային դրօշակը։

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Տարվայ ընթացքում որքան օր են աշխատում իւրաքանչիւր երկրում։ Գերմանացի մէկ ստատիստիկ հաշուել է, որ ամենից քիչ աշխատում են մեզ մօտ՝ Ռուսաստանում, այն է 267 օր։ Միւս պետութիւններում աշխատութեան օրերի թիւը հետեւեալ կարգով է գնում։ Անգլիայում բանում են 278 օր, Սպանիայում—290, Աւստրիայում—298, Իտալիայում—295, Բավարիայում և Բէլգիայում—300, Ֆրանսիայում և Սաքսոնիայում—302, Պրուսիայում—305, Հոլանդիայում և Հիւսիսային Ամերիկայում—308, վերջապէս Ունգարիայում—312 օր։

* * *

Բաղէն-Բաղէնում վախճանվեց Ֆրանսիացի յայտնի գրող և ակադէմիկոս Մաքսիմ Դիւկան։ Հանգուցեալ գրողը լաւ ծանօթ էր Այրեելքին, ուր նա ճանապարհորդել և գրել է իր ճանապարհորդութիւնը։

„ՄՇԱԿԻ“ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՒՍԻՍԱՑԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

ԼՕՆԴՕՆ, 4 փետրվարի։ Երէկ երեկոյեան Գրինիչում, հէնց թագաւորական դիտանոցի մօտ, տեղի ունեցաւ մի զօրեղ պայթիւն և պայթիւնի տեղի վրայից բարձրացրին սաստիկ այլանդակված դրութեան մէջ և հիւանդանոց տարան Բուրդէն անունով ֆրանսիական անարխիստին։ Կէս ժամից յետոյ Բուրդէն մեռաւ՝ չասելով ոչ մի խօսք։ Ասում են, որ Բուրդէն, որը ռումբ էր տանում դրպանում, սայթաքվեց, որի պատճառով և պայթիւն առաջացաւ։

ՊԱՐԻԶ, 4 փետրվարի։ Դատաստանական քննիչը շարունակում է հարցափորձ անել Անրիին, որը, առաջվան պէս, յամառութեամբ լռում է իր յարաբերութիւնների և իր բնակութեան տեղի մասին Լօնդօնում և Պարիզում։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 5 փետրվարի։ Այսօր նաւթարդիւնաբերողների առաջին և երկրորդ խմբերի խորհրդակցութեան մէջ որոշումն կայացաւ՝ դաշնակցութիւնը կազմակերպել առաջին դաշնագրի մի քանի փոփոխութիւններով։ Ընտրվում են 9 ներկայացուցիչներ, 5-ը առաջին խմբից, 4-ը երկրորդից։ Ներկայացուցիչներից ընտրվում են երեք ագէնտներ՝ արտասահմանում գործերը վարելու համար։ Կէրոսին արտահանելու վերաբերութեամբ արտօնութիւնները կորոշվեն առանձին խորհրդակցութիւններում նաւթարդիւնաբերողների հետ, երկաթուղիական գործերի դէպարտամենտում։

—«Новости» և «Петербургская Жизнь» լրագիրների հրատարակութիւնները տարաբնոյ միասին ակցիոներական ձեռնարկութեան են փոխարկված «Տպագրական գործի Բարձրագոյն հաստատված ակցիոներական ընկերութիւն Պետերբուրգում Գուտէնբէրգ» ֆիրմայի տակ, որի պատասխանատու հրատարակիչ-խմբագիր լինելու է Օ. Կ. Նօտովիչ. նա է ընկերութեան վարչութեան նախագահը։

ԿԻԼ, 5 փետրվարի։ «Բրանդէնբուրգ» նոր զրահակիր նաւի վրա տեղի ունեցաւ պայթիւն չոգիից։ Մինչև այժմ յայտնի է, որ սպանված են 46 մարդիկ, ծանր վիրաւորված են 9, զրահաւոր նաւին օգնութեան գնացին 4 չոգենաւեր։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 6 փետրվարի։ Ֆլիգէլ-ադիւտանտ, կավալէրգարդեան գնդի գնդապետ Մեծ Իշխան Նիկոլայ Միխայլովիչ 36-դ Մինգրէլեան գրէնադէրների գնդի հրամանատար է նշանակված։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 7 փետրվարի։ «Бирж. Вѣд.» լրագիրը լսել է, որ ֆինանսների մինիստրութիւնը հարց է յարուցանում, որ լոմբարդները և փոխատու արկղները տարեկան տասերկու պրոցէնտից աւելի չը վերցնեն։

ՄԱԴՐԻԴ, 7 փետրվարի։ «Greif» նաւը, որ գտնվում էր աւստրիական կայսրուհին, քիչ մնաց չը խորտակվեց Բոկվէնաս ծանծաղուտներում, Ամէրիի մօտ։ Նաւը փրկեց «Ville de Bordeaux» չոգենաւը և սկսեց լողալ դէպի Ալիկանտ։

ՎԻԷՆՆԱ, 7 փետրվարի։ Հեռագրով երեք պրոֆէսորներ են կանչված Սոֆիա՝ պրինց Ֆերդինանդի ամուսնու մօտ։ Նրա մօտ արեան վարակվելու նշաններ երևացին։

—

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲՈՐՍԱ

Փետրվարի 4-ին

Լօնդօնի վրա 10 ֆունտ արժէ . .	93 ր.	40 կ
Բերլին վրա 100 մարկ — . .	45 ր.	70 »
Պարիզի վրա 100 ֆրանկ — . .	37 »	7½ »
Ոսկի — — արժէ . .	7 »	48 »
Մաքսային կուպօններ — . .	149 »	50 »
Արծաթ — — — . .	— »	— »
Բօրսային դիսկօնտներ — . .	5 »	7 »
Պետ. բանկի 5% տոմս 1 շրջանի .	103⅜ »	— »
— — — — 2-րդ . .	102½ »	— »
— — — — 3-րդ . .	— »	— »
5% սակեայ բէնտա	160 »	— »
4½ սակեայ փոխառութիւն. . . .	— »	— »
Արևելեան 5% փոխառ. 1-ին շրջ.	— »	— »
— — — 2-րդ —	102 »	— »
— — — 3-րդ —	102⅜ »	— »
— — — 4-րդ —	— »	— »
Ներքին 5% առաջին փոխառութ.	243 »	75 »
— — երկրորդ —	227 »	— »
Պետական երկաթուղային բէնտա.	102 »	75 »
4½ բէնտա	— »	— »
4% ներքին փոխառութեան . . .	95⅝ »	— »
5% գրաւ. թղթ. ազն. կալ. բանկի	101⅜ »	— »
Ազն. կալ. Պետ. բանկի խաղարկութ.		
Գրաւ. թղթ. — — .	190 »	— »
4½% վկայակ. գիւղ. հող. բանկի.	99⅛ »	— »
4½% գրաւական թղթեր կալուած.		
փոխ. կրեդիտ. ընկեր. մետալ. .	154 »	— »
— — — թղթադ. .	101 »	50 »
Պետերբուրգի քաղաքային կրեդիտ.		
ընկերութեան օբլիգացիաները.	101 »	25 »
Մոսկվայի քաղաք. օբլիգացիաներ.	101 »	— »
Օդեսայի — —	100 »	75 »
Թիֆլիսի — — .	98 »	25 »
Գրաւ. թղթ. Թիֆլիսի կալ. բանկի.	98 »	25 »
— — Բուխարայի — .	98 »	25 »

Ս. Պետերբուրգի բօրսայի արամադրութիւնը խաղաղ է։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչ՝ Մ. ՄԷԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Բ. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆԻ

(Կուկիա, Վլօրենցօվի արձանի հանդէպ)

Հիւանդներին ընդունում են ամեն օր, բացի կիրակի օրերից։

ԱՌԱՒՕՏՆԵՐԸ՝

Բ. Ա. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան և վենէրական (սիֆիլիս) հիւանդութիւնների։

Կ. Գ. ՉԻԿՈՎԱՆԻ—9—10½ ժ. աչքի և նեարդային հ.

Դ. Դ. ՐՈՒԴԿՈՎՍԿԻ—10½—11½ ժ. ներքին, երեխաների և կանանց հ.

Ի. Ֆ. ՊՐՕՏԱՍԵՎԻՉ—11½—12½ ժ. ականջի, կոկորդի, քթի և կրծքի հ.

ԿԷՆ-ԲԺԻՇԿ ՏՈՒԲԲՈՎԻՉ—12½—1 ժ. կանանց հ.

Ա. Պ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—1—1½ ներքին և երեխայոց հ.

ԵՐԵԿՈՆԵՐԸ՝

Ա. Գ. ԳՈՒՐԿՈ—6—7 ժ. Սիֆիլիսի և մէզի սեռական օրգանների հ.

Բ. Ա. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ—7—7½ ժ.

Ի. Ե. ՖՐԱՆՑԻՈՒՍ—7—7½ ականջի, կոկորդի և քթի ու նեարդային հ. երկուշաբթի, չորեքշաբթի և ուրբաթ։

Ա. Գ. ԳՈՒՐԿՈ քիմիական և խաչորացուցական հետազօտութիւններ է անում մէզի, խլխի, արեան, կաթի և այլն։

Վճար 50 կ.։ Համախորհրդի (կոնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։ Հիւանդանոցումը ընդունվում են և ԳԻՇԵՐՕԹԻԿ ՀԻՒԱՆԴՆԵՐ։

Հիւանդանոցի վերատեսուչ՝
բժշկապետ ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ։ (№ 72)

ԼՈՒՍԱՆԿԱՐ ՐՕԻՆՕՎԻ ՄՕՏ

Վաճառվում են ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆՈՒ լուսանկար պատկերները.

1) Մեծադիրը, պատից կախելու, ճանապարհածախսով հանդերձ—3 ռուբլի։

2) Կաբինէտային, ճանապարհածախսով—40 կ. Ցանկացողները պէտք է դիմեն այս հասցէով.

Тифлисъ. Фотографія Роинова, на Эриванской площади. Կարելի է ստանալ և վերադիր վճարով наложен. платежъ.) (№ 25) 7—10

ՎԱՃԱՌՎՈՒՄ ԵՆ

ՍՐԻՆԳԻ (Արշակ Մեհրաբեանի)

Առանձին գրքով լոյս տեսած աշխատութիւնները։

1) ԵՐԵԽԱՑՐԻՌ պատկերազարդ, ա. գիրք 50 կ.
2) » » բ. » 50 »
3) » » գ. » 50 »
4) » » դ. » 50 »
5) ԲՆՈՒԹԵԱՆ ԵՐԳԵՐ 1880—90) . . 60 »
6) ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ (1884—90) (տպված Մոսկվայում) . . . . 20 »

Այս աշխատութիւնները կարող են ստանալ բարդավճարով (налож. плат.) դիմելով հեղինակին (առանց ճանապարհածախս վճարելու) այս հասցէով. Аршаку Меграбянъ (Срингъ)։

—

Պատրաստ է 7) «ՓՈՌՐԻԿԻ ՑԻՇԱՏԱԿԱՐԱՆԻՑ» մանկական գրքույկը. պատրաստվում է 8) «ԾԻԼԵՐ», հատուածներ մանուկների համար. 9) «ՍԷՐ և ՎԻՇՏ», ժողովածու ոտանաւոր և արձակ բանաստեղծութիւնների։

(№ 1) 4—10

Սոֆիա, Դաւիթ, Գէորգ և Յովհաննէս Քամալեանները և Սօնա Շամլեան, յաւօք սրտի յայտնելով առաջինը իր սիրելի որդու, միւսները իրանց թանգագին եղբօր

ԲԱՐՍԵՂ ՔԱՄԱԼԵԱՆԻ

մահը, որ տեղի ունեցաւ փետրվարի 7-ին, խնդրում են ընկերներին և ծանօթներին շնորհ բերել յուղարկաւորութեանը, որ լինելու է չորեքշաբթի, փետրվարի 9-ին, սեփական տնից, Գրեաղնայա փողոցում, № 17, դէպի Զգրաշէնի ս. Աստուածածնի եկեղեցին։ Ամբիծքը երեքշաբթի, փետրվարի 8-ին, երեկոյեան ժամը 6-ին։

1—1

ԿՈՎԿԱՍԵԱՆ ԿԵՆՏՐՕՆԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆ

Մ. ԴԷ-ԼԱ-ՖԱՐ ԵՒ ԸՆԿ.

Կատարում է հետևեալ օպէրացիաները.

1) Տոկոսաբեր թղթերի ապահովութեամբ՝ փոխառութիւն.
2) I, II, III խաղարկութեան տոմսակների վաճառումը, ԱՄՍԱԿԱՆ 5 ՐՈՒԲԼԻ ՎՃԱՐՈՒՄՈՎ.
3) Փոխանակագրեր է տալիս Ռուսաստանի զանազան քաղաքների վրա.
4) Ընդունում է ժամանակաւոր և մշտական աւանդներ.
5) Բաց է անում ընթացիկ հաշիւներ՝ չէկերով.
6) Ընդունում է in casso վէկսելներ և ուրիշ դոկումէնտներ։

Լիազօր՝ Ս. Պ. ՊԱՎԼՕՎ ԹԻՖԼԻՍ, Սերգիևսկայա փողոց, № 1.
Գանձակում գործակալն է՝ Նիկոլայ Կարամանովիչ Օհանէսով։
(№ 15) (Հ.) 1—50

ՊՕՍՏ—ՄԱՐԴԱՏԱՐ ՇՈԳԵՆԱՒԵՐ

ՄԷՍՍԱԺԷՐԻ—ՄԱՐԻՏԻՄ

(Мессажери—Маритимъ)

Փետրվարի 11-ին ղուրս կը գնայ Բաթումից „ԼԱԲՈՒՐԴՕՆԷ“ (ЛАБУРДОНЭ) շոգենաւը դէպի Կ. Պոլիս, Մարսէյլ, Հաւր և Լօնդօն։

Տոմսակները ուղղակի հաղորդակցութեան մինչև Պարիզ կարելի է ստանալ պակասացրած սակագնով, Թիֆլիսում։

Տեղեկութիւնների համար դիմել Թիֆլիսի ագէնտին՝ պ. Պուպպօին, Աղնուականների բանկի քարվանսարայում, № 129.
(№ 11) 1—2

Սրանով պատիւ ունեմ հաղորդել ի գիտութիւն ընդհանրութեան, որ **ՀԱՒԼԱԲԱՐԻ ԴԵՂԱՏՈՒՆԸ** Թիֆլիս քաղաքում՝ անցաւ պրօվիզօր Ր. Ա. Բէդլիխից իմ ձեռքը։ Դեղատան կից կը լինի ՔԻՄԻԿՕ-ՏԵԽՆԻԱԿԱՆ ԼԱԲՕՐԱՏՕՐԻԱ՝ ՅԱՆԿԱՑԱԾ ԿԱՊՍԻԼՆԵՐ ՊԱՏՐԱՍՏԵԼՈՒ ՀԱՄԱՐ։ Պատուէրները ընդունվում են ամեն ժամանակ և կը կատարվեն հնարաւորութեան չափ արագ։

Տելեֆօն № 110. Պրօվիզօր Էվալդ Օտտօնովիչ Վէնցել
(№ 15) 1—3

ՄԵԾ ՎԱՃԱՌՈՒՄՆ

(Առանց սակարկութեան)

ՓԵՏՐՎԱՐԻ 1-ից ՄԻՆՉԵՒ ՄԱՐՏԻ 1-Ը

Եղբ. Գուլասպօվների մագազինում և պահեստում, Դվօրցօվայա փողոցի վրա, կալուածական Բանկի տան մէջ և Սարաջևի ու Ծովիանօվի տան մէջ, „բակում“։

Զանազան ապրանքներ։ Կանանց և երեխաների կաստօրի և յարդէ գլխարկներ 30 կօպէկից մինչև 1 ր., տղամարդկանց կաստօրի գլխարկներ 1 ր. 25 կօպէկից սկսած և աւելի թանգ, վուալներ 20 կօպէկով, կրուժեվներ, ժապաւէններ, ծաղիկներ, զգեստների և գլխարկների համար զուգեր՝ արշինը 20 կօպէկով և աւելի թանգ, անձրևակալներ, հովանոցներ և ձեռնոցներ 20 կօպէկից, ժերսէ 1 ռուբլուց սկսած և աւելի թանգ։ Եւ նոյնպէս մեծ ընտրութիւն մոդային և գալանտերէյնի ուրիշ ապրանքների էժան գներով, որի մէջ պատուելի հասարակութիւնը կը համոզվի՝ այցելելով մեր վաճառումն։

(№ 12) Ցարգանքով՝ ԵՂԲ. ԳՈՒԼԱՍՊՕՎՆԵՐ 4—15

ՄՈՎՍԷՍ ԽՈՐԵՆԱՑՈՒ

„ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ“

ռուսերէն նոր թարգմանութիւն

ՄԿԲԱՒՀ ԷՄԻՆԻ

(Ծանօթութիւններով և յաւելուածներով)։ Գինն է 2 ր., ճանապարհածախսով 2 ր. 25 կ.։ Դիմելու է. Մոսկվա, Լազարեան ճեմարանի դիւանատունը։ Թիֆլիս, կենսաբանական զրաւաճառանոց։ (№ 12) 2—3

ԵՐԵՒԱՆՈՒՄ ՆՈՐ ԲԱՑՎԱԾ ԴԵՂԱՏԱՆ ՊԱՀԵՍՏԻՍ գիրքը մեծացնելով, ընդունում եմ պատուէրներ ԴԵՂԵՐԻ և ԿՈՍՄԵՏԻԿԱՆԵՐԻ։ Դեղագործներին և բժիշկներին զիջում։

Դիմել՝ ЭРИВАНЬ, новый аптекарскій магазинъ Александра Никитича Акопьянцъ. ԱԼԷՔՍԱՆԴՐ ՅԱԿՈՎԲԵԱՆՑ
№ 15 (Հ.) 10—10

Նոյեմբերի 1-ից կը ստացվի ՊԱՍՏԵՕՐԻ ՍԻՍՏԵՄՈՎ ՊԱՏՐԱՍՏԱԾ ԲՐՈՒՍՍԱՑԻ ԲՈԺՈՅԻ ՍՊԻՏԱԿ ՏԵՍԱԿԻ ՍԵՐՄԸ, որ արդէն յայտնի է ամբողջ Կովկասում և Պարսկաստանում իր յատկութիւններով և տուած առատ բերքով։ Սերմը կը ստացվի ուղղակի յայտնի „Էկօնօմիտես“ ֆիրմայից։ Գնել ցանկացողները կարող են դիմել ԵՂԲ. ՄՆԱՑԱԿԱՆԵԱՆՆԵՐԻՆ, Բաթումում, Թիֆլիսում, Բագվում. Նուխում Աղա-Մուսա Մահմէդովին.

Այս հասցէով. Бр. Мнацаканянцъ, Тифлисъ, կամ Баку, կամ Батумъ.
(Հ. 2.) 21—32

Дозволено цензурою, Тифлисъ, 7 Февраля 1894 г. Типографія Канцел. Главнонач. Гражданск. частью на Кавказѣ, Лорисъ-Меликовская ул., д. каз.